ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 958-Ա/2 **«03» հունիսի 2024 թ.**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC-ARMENIA 2024»» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի փետրվարի 7-ի N 177-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2024 թվականի մայիսի 30-ի նիստի N 2 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված հայտերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

- ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,
- կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,
- ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2024 թվականի հունիս ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ